արշաւանքի պատճառները և գտնել փոխադարձ համաձայնութեան ուղի։ Այժմ նոյն զգացումներից դրդուած՝ Հայաստանի կառավարութիւնն անմիջապէս դիմում է Ազգային Մեծ Ժողովին՝ դալ փոխադարձ համաձայնութեան և հասկացողութեան ուղիի վրա։

Համոզուած լինելով, որ այդպիսի ճանապարհը կարող է և պիտի գտնուի, Հայաստանի կառավարութիւնը խնդրում է ձեր կառավարութեանը նշանակել մեր և ձեր ներկայացուցիչների տեսակցութեան տեղն ու ժամանակը, որոնք կարող պիտի լինեն պարզել ընդհարումների պատճառները և գտնել խաղաղ համաձայնութեան ուղիները։

Սպասելով ձեր պատասխանին՝ ընդունեցէք յարգանքներիս հաւաստիքը։

Արտաքին գործերի նախարար՝ Հ. Օհանջանեան

Առաջնորդելով միևնոյն ոգով ու տեսակէտներով՝ հայկական բանակի հրամանատարութիւնը նոյեմբ. 5-ին զինադադարի առաջարկ է արել։ Այդ առթիւ տաճկական բանակի հրամանատար Կարաբեքիր Փեազիմ փաշան դրում է մեզ հետևեալը.

6 նոյեմբ. 1920 թ.

Ալեքսանդրապոլի հայ բանակի հրամանատարին

Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան Անգորայի Մեծ Ժողովի կառավարութեան ուղղած հեռագիրը և արիւնհեղութիւնից խուսափելու համար գործողութիւնների դադարեցնելու մասին ձեր դրութիւնը այսօր (6 նոյեմբ.1920թ.) ժամը 9-ին ստացայ։ Կառավարութեանս ուղղած հեռագիրը Անգորա հաղորդեցի. ի հարկէ, ստանալիք պատասխանը ձեզ կը հաղորդեմ։

Ինչպէս որ մինչև այժմ հայ բանակին դրած հեռագիրներից հասկացում է, փափագելով արիւնհեղութիւնից խուսափել՝ մինչև այդ պատասխանի ստացումը գործողութիւնները դադարեցնելու ձեր առաջարկն ընդունում եմ։ Որպէսզի զօրամասերս ապահով լինեն, որ առաջարկը իրական է և անկեղծ և որպէսզի հաշտութեան պայմանների բանակցութեան ժամանակ մեր զօրքի հետքը աղտոտուի, փոխադարձաբար հետևեալ պայմանների ձեր կողմից ընդունելը և գործադրելը կառաջարկեմ.

1. Այժմ Արփաչայի արևմուտքը գտնուող հայ զօրամասերը Ալեքսանդրապոլը մաքրելով Արփաչայից առնուազն 15 կիլոմետր դէպի արևելք պէտք է քաշուեն։

2. Ալեքսանդրապոլ քաղաքը չպիտի դրաւուի, միայն թէ բերդը և կայարանը մեր կողմից զինուորական դրաւման տակ պէտք է առնուեն. Ալեքսանդրապոլում հանրային ապահովութիւնը, կարգի պահպանութեան տակ գտնուելը Ալեքսանդրապոլի բնակչութեան պէտք է յայտարարուի։

3. Նկատի ունենալով, որ Ալեքսանդրապոլը մեծ նշանակութիւն ունի որպէս Թիֆլիս Երևան երկաթուղիի միացման կէտ, Ալեքսանդրապոլի շուրջը տաս կիլոմետր տարածութեամբ շրջանը թիւրք բանակի վստահութեան՝ զօրամասերի կողմից դրաւելուն արգելք չլինել։

4. Զինադադարի տևողութեան միջոցին, թիւրքական բանակի զօրքերի վրա ոչ մի կողմից և ոչ մի պատրուակի տակ յարձակում չանել և կրակ չբանալ։